ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, ք. Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5
հեռ. (+374 10) 59 22 59, էլ. փոստ՝ unibank@unibank.am
Ինտերնետային կայք՝ www.unibank.am
Հաշվետվություն թիվ 14, 13.11.2020

«Յունիբանկ» ԲԲԸ Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր Ժողովի կայացրած որոշումների վերաբերյալ

13.11.2020թ. «Յունիբանկ» ԲԲԸ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ընդհանուր ժողովի կողմից կայացվել են հետևյալ որոշումները՝

1. Հաստատել «Յունիբանկ» ԲԲԸ կանոնադրությունում հետևյալ փոփոխությունները՝ կապված 29.06.2020թ. «Յունիբանկ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգի 7-րդ հարցի վերաբերյալ որոշման մեջ փոփոխություններ կատարելու հետ.

   վերաշարադրել կանոնադրության 4-րդ գլխի 4.1 կետը, հեռացնել 4.7 կետը, վերաշարադրել 5-րդ գլխի 5.4 կետը, 6-րդ գլխի 6.7 կետը, 7-րդ գլխի 7.10 կետի առաջին նախադասությունը և ա) ենթակետը, 8-րդ գլխում ավելացնել 8.7 կետը, վերաշարադրել 10-րդ գլխի 10.25 կետը, 10.14 կետի առաջին նախադասությունը, 10.1 գլխի 10.1.1 կետի թ) ենթակետը, վերաշարադրել 11-րդ գլխի 11.13 կետի վերջին նախադասությունը և 11.18 կետը:

2. «Յունիբանկ» ԲԲԸ կանոնադրության փոփոխությունները ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գրանցելուց հետո թողարկել 4,778,261 /չորս միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր վաթսունմեկ/ հատ Բ դասի լրացուցիչ փոխարկվող արտոնյալ բաժնետոմս 12% հաստատագրված տարեկան շահութաբաժնով, յուրաքանչյուրը 230 /երկու հարյուր երեսուն/ ՀՀ դրամ անվանական արժեքով՝ բաց բաժանորդագրության միջոցով տեղաբաշխմամբ:

Վարչության նախագահ – գործադիր տնօրեն Մեսրոպ Հակոբյան